

տարեկան մէկ ըուբլի դրամավճարի համար: Դոյթուցիները ունին մի ծերացած և գրեթէ անգրագէտ քահանայ, երկու ջրաղաց և մի բամբակ մաքրելու գործարան: Դոյթուցիները սակաւ կարօտութիւն ունենալով կենսական պիտոյքների, դուրս չեն գալիս գիւղից և չեն շփոււմ այլ գաւառների ու քաղաքների բնակիչների հետ, որի համար էլ նրանց մտաւոր վաճակը գտնւում է նահապետական դրութեան մէջ, նոյնիսկ նրանց հագստի ձևը միևնոյնն է, ինչ որ առաջ էր, օր. կանայք հագնում են դեռ քիւլաշան, իսկ տղամարդիկը կապուտ կտաւը, իրանց գործած ու ներկած: Մի քանի տներում կնիկները գործում են ընտիր գորգեր ու կապերտներ: Բնակիչները գաղթել են Պարսկաստանի Սոմայ գիւղից և խօսում են սալմաստցիների լեզուով:

Մ. Տ.-Ա.

(Պը շարունակուի)

Օր. X-ին

Անդին քոյրիկ,

էլ մի կրկնիր դու այս ցաւոտ օրերում,
Որ ողջ աշխարհն իմ մէջ է լոկ ամփոփւում,
Որ ամենից, ամեն ինչից առաւել
Սիրում ես ինձ, ինձնով ես լոկ դու տարուել:

Ձկնայ արդեօք մի այլ վսեմ գաղափար,
Որ պաշտելի բարձր լինի մեզ համար.
Ձկնայ արդեօք դաւանանքներ ու խոհեր,
Որ կլանեն անվերջ տանջող մեր մարեր:

Նայիր, քոյրիկ, սևով պատած մեր կեանքին,
Արցունքի մէջ թաղուած կորած մեր օրին.
Նայիր՝ ինչպէս աշխարհը մեզ բանտ է մուլթ,
Որտեղ շնչում, ապրում ենք մենք անօգուտ...

Սիրենք միմիանց, բայց այդ սիրուց առաւել
Մեզ պէտք է դեռ այլ խոհերով դրաւուել...
Սև օրերի սէրն էլ է սև երևում
Երբ նա միայն Նսի մէջ է ամփոփւում:

Ա. ՄԵՂՐԵԱՆՑ